ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ, ՍՈՒՐԴՈ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՍՈՂԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ՕԳՆԱԿԱՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ ____

ք. Երևան «_____» _____ 2025թ.

ՀՀ քննչական կոմիտեն՝ (այսուհետ՝ Պատվիրատու), **ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Խաչատրյանի**, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և -**ն՝ ի դեմս** (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի «Պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձին նշանակելու կարգը, նրա վարձատրության չափը և կարգը սահմանելու մասին» N 1334-Ն որոշմամբ սահմանված պահանջներով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել թարգմանչական ծառայությունները՝ (այսուհետ՝ Ծառայություններ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Կատարողը Ծառայությունը մատուցում է Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան՝ սույն պայմանագրով նախատեսված ծավալներով, ձևով և Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 **Պատվիրատուն իրավունք ունի**՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող կամ անպատշաճ որակի Ծառայություն մատուցելու դեպքում չընդունել Ծառայությունը կամ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տույժը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը ամբողջությամբ կամ կոնկրետ չափաբաժնի մասով, եթե **Կատարողի կողմից սույն պայմանագրի պահանջներն էականորեն խախտվել են**: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) պարբերաբար խախտվել է(են) Ծառայության մատուցման ժամկետը (ները)

գ) պարբերաբար հրաժարվել է ծառայություն մատուցելուց առանց ընդունելի պատճառների:

Նշված պայմանների խախտման դեպքում հիմնական մասնագիտական կառուցվածքային համապատասխան ստորաբաժանման վարույթն իրականացնող քննիչի զեկուցագրի հիման վրա, պետի կողմից գրություն է ներկայացվում գլխավոր քարտուղարին:

2.1.4 **Իրացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ**:

2.2 **Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.3 **Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.4 **Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Սույն պայմանագրի շրջանակներում ստացված տեղեկությունները չփոխանցել երրորդ անձանց և պահպանել գաղտնիություն:

2.4.5 Սույն պայմանագրի կատարման ընթացքում նոր թարգմանիչներ ընդունելու դեպքում Պատվիրատուին ներկայացնել ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 20-ի N 1509-Ն և 2018թ. նոյեմբերի 22-ի N 1334-Ն որոշումների պահանջները բավարարող փաստաթղթեր:

2.4.6 Կատարողը պատասխանատվություն է կրում մատուցված Ծառայության որակի և պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ժամկետների պահպանման համար:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

3.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 25-ը:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի արդյունք է հանդիսանում քննիչին հանձնված գրավոր (էլեկտրոնային և թղթային), բանավոր թարգմանությունը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայության մատուցումը:

4.2 Թարգմանչի (օգնական) և վերջինիս ներգրաված քննիչի միջև **ծառայությունների մատուցման փաստը հավաստվում է համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված** N 2-**ով նախատեսված Հավաստագրի**:

4.3 Գրավոր թարգմանություններ կատարելու դեպքում՝ թարգմանչի (օգնական) և վերջինիս ներգրաված քննիչի միջև **ծառայությունների մատուցման ժամկետները սահմանվում են համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված** N 4-**ով նախատեսված գրավոր թարգմանվող նյութերի հանձման-ընդունման ակտի**:

4.4 Կատարողի կողմից հաստատված հավաստագրերը և հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3) ներկայացվում են **հիմնական մասնագիտական**

կառուցվածքային համապատասխան ստորաբաժանման պետին: Կատարողի և ստորաբաժանման պետի կողմից հանձնման-ընդունման արձանագրության հաստատումը հանդիսանում է ծառայությունների կամ դրա մի մասի պատշաճ մատուցված լինելու հավաստում:

4.5 Սույն Պայմանագրի 4.3-րդ կետով նախատեսված թարգմանության կատարման ժամկետների խախտման վերաբերյալ նշումների դեպքում կիրառվում է սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը, որը հաշվարկվում և հաշվանցվում է Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ: **Ծառայությունների մատուցման ժամկետների խախտման փաստը արձանագրելու համար հիմք է հանդիսանում հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման պետի համապատասխան գրությունը**, **որին կցվում է գրավոր թարգմանվող նյութերի հանձման-ընդունման ակտը** (**Հավելված** N 4):

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրի գինը, ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում ինքնարժեք, շահույթ, հարկեր և այլ վճարներ: Ծառայության միավորի արժեքները սահմանված են Հավելված N 1-ում:

5.1.1 Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը, հավաստագրերը, գրավոր փաստաթղթերի հանձնման-ընդունման ակտերը, թարգմանությունը կոնկրետ վարույթի շրջանակներում կատարված լինելու դեպքում թարգմանչին (օգնականին) ներգրավելու վերաբերյալ քննիչի որոշումը, (իսկ այլ դեպքերում վարույթի շրջանակներից դուրս թարգմանություն կատարելու դեպքում, երբ կատարված թարգմանությունից է կախված վարույթ նախաձեռնելու կամ չնախաձեռնելու հարցը հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման պետի կամ քննիչի կողմից գլխավոր քարտուղարին հասցեագրված գրությունը) և հաշվարկային փաստաթղթերը (այսուհետ՝ ամբողջական Փաթեթ) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման պետի կողմից փաթեթի ստորագրումից հետո:

5.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է ըստ սահմանված կարգի ներկայացված Փաթեթի հիման վրա (եթե ամբողջական Փաթեթը Պատվիրատուն ստանում է և ուսումնասիրության արդյունքում շտկումների կարիք, կամ թերություններ չեն հայտնաբերվում) ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

6.2 **Սույն պայմանագրի Հավելված** N 1-**ով նախատեսված տեխնիկական բնութագրին** չհամապատասխանող Ծառայություն մատուցելու դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ **տվյալ ծառայության համար վճարման ենթակա գումարի** 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման՝ **Հավելված** N 1-**ով նախատեսված տեխնիկական բնութագրով սահմանված ժամկետները** խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ **տվյալ ծառայության համար վճարման ենթակա գումարի** 0,05 (զրո ամբողջ հինգ հարուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում

և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.8 Կատարողի կողմից ծառայությունների մատուցումից առանց ընդունելի պատճառների պարբերաբար հրաժարվելու դեպքերում, տվյալ հարցի շուրջ Պատվիրատուի նախաձեռնությամբ կազմակերպվում է քննարկում Կատարողի և հիմնական մասնագիտական կառուցվածքային համապատասխան ստորաբաժանման պետի և (կամ) վարույթն իրականացնող քննիչի մասնակցությամբ՝ հարցի լուծումը սույն Պայմանագրի 2.1.3 կետի շրջանակներում դիտարկելու նկատառումներով:

7. **ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ** (**ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ**)

7.1 Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. **ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերը լուծվում են դատական կարգով:

9. **ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

9.1 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: **Ընդ որում, պայմանագրի Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան**

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.2 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

9.3 Սույն պայմանագիրը կազմված **է հայերեն լեզվով**, կնքվում է երկու օրինակից՝ **յուրաքանչյուրը** _____ էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մաս, յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.4 Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

9.5 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

10 ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե **ք. Երևան, Մամիկոնյանց** 46/5 **ՀՎՀՀ** 02631263 **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն**	
Գլխավոր քարտուղար Գ.Խաչատրյան	**Տնօրեն**
---	---
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1

« » **ՍՊԸ**

Չափաբաժնի համար	Չափաբաժնի /ծառայության/ անվանում և բնութագիր	Ծառայության մատուցման միավորի գին /ՀՀ դրամ/	
		Գրավոր (1 էջ=1800 նիշ)	Բանավոր (1 ժամը)
1	*հայերենից ……., ……**ից** հայերեն*		

Տեխնիկական բնութագիր
Կատարողի կողմից կատարվելու են ոչ բարդ, միջին բարդության, միջին բարդության մասնագիտական, բարդ, բարդ մասնագիտական (այդ թվում՝ ծանր հանցագործությունների վերաբերյալ) **օրենքով պահպանվող գաղտնիք** հանդիսացող գրավոր և բանավոր թարգմանություններ 24 ժամ/7 օր աշխատանքային ռեժիմով (նաև հանգստյան և տոնական օրերին, առանց բացառության) Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի բոլոր ստորաբաժանումներում: Թարգմանություն կատարող ֆիզիկական, իսկ կազմակերպությունների դեպքում՝ կազմակերպության աշխատակից հանդիսացող, համապատասխան փաստաթղթեր ներկայացրած թարգմանիչը վարույթին ներգրավվելու է վարույթն իրականացնող քննիչի «Թարգմանիչ ներգրավելու մասին» որոշմամբ, ինչի կայացումից առաջ քննիչը ստանում է վերջինիս որակավորումը հաստատող փաստաթղթերը և նշված որոշմամբ, ի թիվս այլնի, նրան տեղեկացնում է **սխալ թարգմանություն** կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված քրեական պատասխանատվության մասին, իսկ վարույթի շրջանակներից դուրս թարգմանություն կատարելու պահանջ է ներկայացվելու գրության հիման վրա: Գրավոր թարգմանության դեպքում քննիչը թարգմանվող տեքստը հանձնում է թարգմանչին՝ համաձայն **Հավելված** N 4-**ի**: Թարգմանիչը տեքստը ստանալու օրվանից՝ **սահմանված ժամկետում**, կատարում է **որակյալ** թարգմանությունը և քննիչին է ներկայացնում իր կողմից հաստատված թարգմանված տեքստը՝ թղթային և դրա էլեկտրոնային տարբերակներով՝ **համաձայն նույն հավելվածի**: **Քննիչի կողմից սահմանվում են հստակ ժամկետներ՝** 1-4 **էջի դեպքում՝** 1-2, 5-10 **էջի՝** 2-3, 11-25 **էջի՝** 3-5 **օր**, **սակայն կախված գրավոր թարգմանության բարդության աստիճանից և** 25 **էջից ավելի նյութերի թարգմանության պարագայում՝ կարող են սահմանվել այլ ժամկետներ**: Թարգմանության ենթակա նյութի մեծածավալությունից ելնելով՝ Պատվիրատուն (քննչական ստորաբաժանման հետ քննարկման արդյունքում), արդարադատության շահերից ելնելով, Կատարողի կողմից թարգմանության աշխատանքները արդյունավետ իրականացնելու նպատակով կարող է սահմանել է հստակ ժամկետ՝ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով առ այն, որ մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդումն այն հարուցելու պահից չի կարող տևել ավելի, քան՝ 1) երեք ամիս՝ ոչ մեծ ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով. 2) հինգ ամիս միջին ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով. 3) ութ ամիս՝ ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով. 4) տասն ամիս՝ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով: Ժամկետը պետք է սահմանվի այնպես, որ վարույթն իրականացնող ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը՝ օտարալեզու նյութերի հայերեն հաստատված թարգմանությունը ստանալուց հետո ողջամիտ ժամկետ ունենա քրեական վարույթով հետագա նախաքննությունը իրականացնելու համար: Թարգմանված նյութերը տրամադրվում է Պատվիրատուի կողմից սահմանված վայրերում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև նյութերը տեղում կարվում են բնօրինակների հետ: Թարգմանված նյութը ներկայացվում է A-4 ձևաչափով, տառաչափը՝ 12, միջտողային միջակայքը՝ 1.5, էջերի լուսանցքները՝ վերևից և ներքևից 20 մմ, աջից 15 մմ և ձախից 30մմ: Թարգմանչական էջ է համարվում 1800 նիշ բացատով էջը, բացառությամբ չինարեն, կորեերեն, ճապոներեն լեզուների:

Հավելված 2
« » ----------20 թ. կնքված
Թիվ պայմանագրի

Հ Ա Վ Ա Ս Տ Ա Գ Ի Ր

Թարգմանչական ծառայություններ մատուցելու վերաբերյալ

«____» «_____» 20 թ.

Ստորաբաժանման անվանումը՝ ՀՀ ՔԿ_____

_____

Քննիչի Ա.Ա.Հ _____

Վարույթի կամ վարույթից դուրս կատարված լինելու դեպքում քննիչի կողմից հասցեագրված գրության համարը_____

Թարգմանչական ծառայություններ մատուցած ընկերության անվանումը_____

Թարգմանություն իրականացնողի (թարգմանչի) Ա.Ա.Հ

_____

Առկայության դեպքում թարգմանիչ ներգրավելու որոշման ամսաթիվը «____» «_____» 20 թ.

Բանավոր թարգմանություն

_____

(թարգմանված լեզվի անվանումը)

1.Թարգմանության սկիզբ (ամսաթիվ, ժամ /24ժ) _____

Թարգմանության ավարտ (ամսաթիվ, ժամ /24ժ) _____

Տևողություն՝ _____ ժամ

2.Թարգմանության սկիզբ (ամսաթիվ, ժամ /24ժ) _____

Թարգմանության ավարտ (ամսաթիվ, ժամ /24ժ) _____

Տևողություն՝ _____ ժամ

3. Թարգմանության սկիզբ (ամսաթիվ, ժամ /24ժ) _____

Թարգմանության ավարտ (ամսաթիվ, ժամ /24ժ) _____

Տևողություն՝ _____ ժամ

Գրավոր թարգմանություն

Նիշերի քանակ_____

Էջերի քանակ_____

Քննիչ

_____
Ստորագրություն

Թարգմանիչ

_____
Ստորագրություն

Կ.Տ.

Հավելված 3
« » ----------20 թ. կնքված
Թիվ պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____
_____
Գտնվելու վայրը՝

Հ/Հ _____

ՀՎՀՀ_____

Պատվիրատու

_____
_____
Գտնվելու վայրը՝

Հ/Հ _____

ՀՎՀՀ_____

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«____» «_____» 20 թ.

Ստորաբաժանման անվանումը՝_____
Արձանագրությունը ներկայացնողի (ստորաբաժանման պետի) Ա.Ա.Հ_____

Պատվիրատուն՝ և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. դուրս գրված N հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

N	Մատուցված ծառայությունների					
	Վարույթի համարը կամ վարույթից դուրս կատարված լինելու դեպքում քննիչի կողմից հասցեագրված գրության համարը	Ծառայության անվանումը	Քանակական ցուցանիշը	Կատարման ժամկետը	Միավորի արժեքը համաձայն պայմանագրի	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)
			Ծառայությունների մատուցման ժամերի թիվը(եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում, ապա ժամերի թիվը նշվում է ըստ օրերի), թարգմանված էջերի կամ նիշերի թիվը	Ծառայությունների մատուցման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը (ամսաթվերը, եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում)		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ հավաստագրերը և բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն Արձանագրության բաղկացուցիչ մասը:

Ծառայությունը հանձնեց

_____
Ստորագրություն

_____
Անուն, ազգանուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
Ստորագրություն

_____
Անուն, ազգանուն

Կ.Տ.

Հավելված 4
« » ----------20 թ. կնքված
Թիվ պայմանագրի

Ա Կ Տ

ԳՐԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ[1]

Ստորաբաժանման անվանումը՝ ՀՀ ՔԿ_____

_____

Քննիչի Ա.Ա.Հ _____

Վարույթի կամ վարույթից դուրս կատարված լինելու դեպքում քննիչի կողմից հասցեագրված գրության համարը_____

Թարգմանչական ծառայություններ մատուցող ընկերության անվանումը_____

Թարգմանություն իրականացնողի (թարգմանչի) Ա.Ա.Հ _____

Թարգմանության ենթակա նյութերի տրման ամսաթիվ «_____» _____ 20 թ.

Էջերի քանակ_____

Թարգմանության համար սահմանված ժամկետ _____

Թարգմանված նյութերի հանձնման ամսաթիվ «_____» _____ 20 թ.

Էջերի քանակ_____

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

Քննիչ

_____
Ստորագրություն

Կ.Տ.

Թարգմանիչ/տնօրեն

_____
Ստորագրություն

Կ.Տ.

[1] Ծանոթագրություն. սույն ակտը լրացվում է նախքան գրավոր թարգմանության ծառայությունների մատուցումը: